№ 111 Յուլիսի 1 (13) 1880 Յուլիսի 1 (13) № 111

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Բաղուից։ Նամակ Ակէքսանդրապոլից։ Նամակ Շուշուից։ Նամակ Շամախուց։ Նամակ Մօսկվայից։ Նամակ Ցագանրօգից։ Նամակ Դուշէտից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։—«Մշակի» հեռագրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Ֆրանսիական լրագրի յօդուածը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Ռուս գնդապետ Կումէրաուի սպանող Վ. Էլի-Ալմէդ մահմեդականը մինչև այժմ պատժված չէ թիւրքաց կառավարութեան ձեռքով։ Լրագիրները հաղորդում են, որ չը նայելով որ ռուսաց կառավարութիւնը պահանջել է Վ. Էլի-Ալմէդի մահվան դատապարտելը, այնու ամենայնիւ թիւրքաց կառավարութիւնը մինչև այժմ չէ վստահանում իրագործել այդ պատիժը։ Այժմ ռուսաց դեսպան Նովիկով կրկին պահանջում է պատժի իրագործելը և սպառնում է որ բոլոր պետութիւնների դեսպանները միասին ճնշում կը ներգործեն Ռ. Դրան վրա, որպէս զի սա վերջապէս կատարի մարդասպանի վրա մահվան դատավճիռը։

Ինչն մէջն է գաղտնիքը, որ մինչև այժմ Կումէրաուի սպանողը պատժված չէ։ Գաղտնիքը նրա մէջն է, որ մահմեդական, կրօնական օրէնքի հիման վրա չէ կարելի պատժել մի մահմեդականին, որ սպանել է մի քրիստոնեային։ Քրիստոնեային սպանելը յանցանք չէ մահմեդականի համար....

Լուրջան չէր հաւատում որ թիւրքերը և քիւրդերը անխնայ սպանում, կոտորում են խեղճ հայերին ոչխարների պէս, և չեն պատժվում այդ տեսակ սպանութիւնների համար։ Թող այժմ, Վ. Էլի-Ալմէդի գործից Լուրջան համոզվի, որքան անտանելի է թիւրքահպատակ քրիստոնեաների դրութիւնը։

Լեթէ ռուս գնդապետի սպանողը, որի մահվան դատավճիռը պահանջում է ռուսաց հոգ կառավարութիւնը, մինչև այժմ պատժված չէ, հասկանալի է թէ որքան աւելի քիչ են պատժվում խեղճ հայերի սպանողները....

Թիւրքիայի պետական կեանքի անշարժութեան պատճառը պետական սխալ կազմակերպութեան մէջ չէ, այլ նոյն իսկ մահմեդական կրօնի հիմնական սկզբունքների մէջն է։ Մահմեդական կրօնը պատժում է միայն այն սպանողին, որ սպանում է իր պէս ուղղափառին, մահմեդականին, իսկ անհաւատին սպանելը ոչ թէ միայն յանցանք չէ, այլ մինչև անգամ արժանաւորութիւն է։

Ոչ թէ կառավարչական ըէֆորմներ են հարկաւոր Թիւրքիային, այլ անհրաժեշտ է շարիաթի օրէնքի թիւրք դատարաններից վերջները, հարկաւոր է բաժանել եկեղեցին պետութիւնից։

Այժմեան թիւրքաց արտաքին գործերի մինիստր Աբրէդին փաշայի առաջարկված ըէֆորմները Հայաստանի համար, ոչինչ նշանակութիւն չեն ունենայ, մինչև որ թիւրքիան ստիպված չը լինի վերցնել շարիաթը դատարաններից և դատել ամէն գործերը ոչ թէ կրօնական օրէնքի ոգով, այլ ժամանակակից եւրոպական լուսաւորված երկիրներից մշակված ընդհանուր իրաւարանական օրէնքների հիման վրա։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «LES DEBATS» ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱՆԸ

Մի ֆրանսիական լրագրի յօդուածի թարգմանութիւնը հետաքրքիր ձեզ, որ տպված է եղել «Débats» լրագրին մէջ։ Լրագիրը կրսէ թէ «արեւելեան մի մարդ էր որ կը գրէ դոյն։ Մենք գիտենք թէ դա հայի գրչէն ելած է, ուստի պիտի տեսնենք այդ յօդուածին մէջ ճշգրիտ պատկեր թիւրքաց վրա։ Ահա յօդուածը։

Եւրոպա 3 նպատակի կը հետամտի արեւելքի մէջ։ Ա) բարձրել քրիստոնէից վիճակը, բ) արգելել Ռուսիան որ արեւելքի տէր չը դառնայ, գ) պահպանել թիւրք կայսրութիւնը։

Ազգային հաշիւներու համար, մի այսպիսի յայտագիր բանականութեան դէմ մի մեծ անգամ չը պարունակէր։ Եւրոպա մեծ միջոցներ ունի այս 3 կէտերուն իւրաքանչիւրը գործադրել, բայց հիպէս կը լինի, որ եւրոպական դիւանագիտութիւնն, իր ամէն միջոցներովն հանդերձ, չը կարողացաւ երբէք մէկ հատը միայն իրագործել տալ։

Մեզի համար սորա պատճառը չատ պարզ և յայտնի է։ Վերոյիշեալ յայտագրին մէջ կար մի սխալ, մի օտարոտի և անհնարաբեր սխալ, զոր եւրոպացիք երբէք չեն կարողացած տեսնել, և որ սակայն եւրոպացւոց հաշիւներն բոլորովին վեր ի վար ընելիք սխալ մ'է։

Այս սխալը պիտի ջանանք մէկ քանի բառով բացատրել։ Ամէն ոք գիտէ թէ արեւելքի մէջ կայ մի մեծ երկիր, զոր կանուանեն Թուրքիա, թէ կայ մի նուաճող ազգ, զոր կը կոչեն Թուրք։ Մենք ամենքիս գիտենք նաև թէ այդ Թուրքիան և Թուրք ազգը կը կազմեն օսմանեան կայսրութիւն ըսուածը։ Բայց այն բանը զոր կանգիտանայ Եւրոպա և որու հաւատալու ամէն ոք պիտի դժուարանայ, այն է թէ արեւելցւոց համար չը կայ բառին բուն նշանակութեամբ մի թուրք ժողովուրդ, և ասուցիկ կարելի է ասել թէ երբէք գոյութիւն չէ ունեցած ոչ մի թուրքիա և ոչ իսկ մի օսմանեան Բարձրագոյն Դուռն, որ քաղաքական մի կառավարութեան իրաւասութիւններն (attributions) ունեցած լինի, որպէս ունեն եւրոպական կառավարութիւնքը։ Այս անունները և բաները բոլորովին անծանօթ են արեւելքի մէջ։

Ընդարձակ արեւելեան պետութիւն, զոր անուանափոխեց (défigurer) թուրք և թուրքիա անուններով, մինչև ցարդ կարծուածին բոլորովին հակառակն է։ Այդ լայնածաւալ միութիւնական իշխանութիւնը, այդ թուրք կայսրութիւնը, այդ օսմանեան Բարձրագոյն Դուռն, զոր Եւրոպա կը փափագի փրկել և զոր ճշմարիտ չը կարողացաւ տակաւին սահմանել (définir), այդ է իսլամութեան ուղղափառ եկեղեցին։

Եւրոպա, խարուելով մի քանի պատմական իրողութեանց արտաքին երեւոյթէն, ոչխարական պետութիւն կարծեց այն, որ մոմիայն իսլամութեան զինուորական պապականութիւն մ'էր (la papauté militaire l'Islam)։ Եւ այս մոլորութիւնը դառնալով հիմն այն ամէն յարաբերութեանց, զոր Եւրոպա ունեցաւ իսլամին հետ, մեծեցաւ արեւելքի մէջ իրաց և գաղափարաց այն զարհուրելի խառնաշփոթութիւնն, որու մէջ Եւրոպացիք ուրիշ բան չը գտան մինչև ցարդ, բայց եթէ դառն պատարագներ։

Շատ կարեւոր է որ այս սխալը ուղղուի ամէն ոք հասկանայ թէ բնութիւն ունին այս իսլամական պապականութեան պահանջմունքը, այս իսլամական պապականութեան, զոր մեծ մոլորութեամբ Թուրքիա կը կոչեն, որու ճշմարիտ անունն է «իսլամութեան մեծ և սուրբ խալիֆայութիւն»։

Այս ամենակարեւոր կէտին ուսումնասիրութեան համար, ներսի մեզ մի քանի ծանօթութիւններ տալ։

Խալիֆայութիւնն լինելով աստուածային իշխանութեան մի փոխանորդութիւն, և ունենալով պաշտօն նուաճելու և կառավարելու, եթէ լինի կարելի, ամբողջ աշխարհը, դիրքն է ըմբռնել թէ մի այդպիսի տիեզերական աստուածապետութիւնն (théocratie) չէ կարող մի նմանութիւն ունենալ մի քրիստոնեայ պետութեան հետ, և ոչ իսկ որ և իցէ մի կառավարութեան հետ։ Մինչ բոլոր պետութիւնք իրր խարիսխ ունին մի ազգայնութիւն և ազգային երկիր։ Հոս, թիւրքիոյ համար չը կայ ոչ ազգայնութիւն, ոչ հայրենիք։

Խալիֆայութիւնն կապուած չէ ոչ մի հողի, ոչ մի ցեղի և ոչ մի ընտանիքի։ Պակաստում ինչպէս յեղիպտոս, Ապպասի որդւոց ինչպէս Նան Օսմանի որդւոց ներքև, միշտ և ամենուրեք իսլամական եկեղեցին է որ կայ, ճշմարիտ և միակ կառավարութիւնն է որ գոյութիւն ունի։ Իր երկիրներն, ըստ ինքեանն, պէտք չէին կոչուիլ ոչ թուրքիա, ոչ Եգիպտոս, ոչ Արաբիա, սոքա փոխանակ երկիրներն են։ Այս եկեղեցւոյ անդամք յանախ չեն և չեն կրնար լինիլ ոչ արաբ, ոչ թուրք, ոչ օսմանեան, այլ անդամք միմիայն մի սուրբ մարմնոյ են։

Խալիֆայութեան տիեզերական կայսրութեան ներքև,—և պատմութիւնն այս մասին մեզ վկայ է,—ընկերական կապը ոչ լեզուն է, ոչ ցեղն է, ոչ պատմութիւնը, այլ հաւատքն է։ Թօսէ թուրքերէն կամ հնդերէն, եկեր Զինէն կամ Ամերիկէն, եթէ ունիս մահմեդական հաւատքը, դու օրինաւոր քաղաքացի ես (citoyen légitime) այս իսլամ պետութեան մէջ։ Եւ, հետևաբար, ծնած եղիր Ամերիկի մէջ, բնակէ Մէքքէ, խօսէ մարգարէին լեզուն, լրէ որ և է ծառայութիւն իսլամութեան, եթէ դու մի սիրիսլամ չես, դու ի հարկէ արտաքսուած ես ժողովրդեան շրջանակէն, դու հաւատացեալն հաւատարը չես կրնար լինիլ ոչ երբէք։ Իսլամութենէ դուրս, դու մի «ինքնատ հեթանոս մ'ես» դու ես պարզաբար մի «ինաստ»։

Եւրոպա թէ գաղափար էլ որ ունենայ այս բանկղանց արժէքին վրայ, ճշմարիտ սա է թէ այս սկզբանց ներքին է որ իսլամութիւն խորտակելով բազմաթիւ կայսրութիւններ և ազգեր, կարողացաւ հիմնել այնպիսի ահեղ մի զինուորական աստուածապետութիւն որու նմանը մարդկային հանճարը չդացած չէր երբէք։ Երբ որ այս զինուորական և կրօնական աստուածապետութեան գերագոյն զէկը, մինչև ցարդ մեզ անհասկանալի ճանապարհներով, անցաւ Օսմանի ընտանեաց ձեռքը և այս իրողութեամբ, իսլամութեան սուրբ աթոռը փոխադրուեցաւ ի Կ. Պոլիս, քրիստոնեայ ազգաբնակչը կատարած տեսաւ, առանց նշանակութիւնը ըմբռնելու, մին այն ամենամեծ դէպքերէն, որոնցմէ կախում ունի աշխարհիս բախտն։ Այն ժամանակի քրիստոնեայք չատ աղօս կերպով կը յիշէին թէ Բիւզանդիոնը նուաճողը մի թուրք էր, և ցեղով այս խալիֆայութեան իշխանութեան վրայ չուսնենալով ոչ մի որոշ կարծիք, կարծեցին թէ թիւրքեանին խորերն եկած մի բարբարոս հրոսակ մ'է, որ եկաւ բոլոր աբեւելքը ձեռքն անցուցը։

Խալամութեան հզոր եկեղեցւոյն խաւարային հնարքները քօղարկված մնալ մեզանից քրիստոնեայ ազգերէ։ Եւ որովհետև իսլամք հոգ չէին ըներ իրենց մեծութեան պատճառներուն վրա լուսաւորել քրիստոնեայցն, այս վերջինք չարուսափեցին կարծել թէ խալիֆայութիւնն իրապէս մի թուրք պետութիւն մ'էր։ Քրիստոնէից համար մարգարէին փոխանորդը, հաւատացեալից հրամանատարը, ի մի բան, խալիֆը, միշտ եղած է Մեծ թուրքը (Le Grand Turc) և իսլամի տիեզերական եկեղեցին էլ եղած է թուրքիան։

Ժամանակ ետաց, եւրոպական դիւանագիտութիւն, իր ծանօթութեանց շրջանակն ընդարձակելով, կարցեց գտնել Արեւելքի մէջ մի կայսր թուրքաց, մի Բարձրագոյն Դուռն, մի Տիվան, և վերջապէս այժմ, այս ամէն բաները վերածուեցան եղան Օսմանեան Բ. Դուռն։ Բարեխոսաբար մուսիմանաց համար, այս ամէն անուանակոչութիւնք քանա չը փոխեցին սուրբ խալիֆայութեան բնութիւնը։ Խալիֆայութիւնն, անարգելով բոլոր սրտէն Եւրոպայոյ գաղ-

ԿԱՆԱՆՑ ԿՅԱՆՔԻ ՄԵՋ

Ամենայն ինչ ունի իր սահմանը։ Ամենայն ինչ ունի իր սահմանը։ Ամենայն ինչ ունի իր սահմանը։